# ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԳՐԱՍԵՆՅԱԿԻ ՎԵՐԱԿԱՌՈՒՑՄԱՆ ԵՎ ՆՈՐՈԳՄԱՆ ՆԱԽԱԳԻԾ ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆՈՒՄ

**Բացատրագրի կազմը՝**

1. Նախագծի նկարագիրը
2. Բոլոր աշխատանքների ընդհանուր նկարագիրը
3. Լոտ 9. Մանրամասն նկարագիրը

## 1. ՆԱԽԱԳԾԻ ՆԿԱՐԱԳԻՐԸ

Սույն նախագիծը կազմված է պատվիրատուի կողմից ներկայացված ընդհանուր առաջադրանքի և նախագծի ներկայացուցիչ, ճարտարապետ-խորհրդատուի կողմից կազմված սենյակների տեխնիկական զննման զեկուցագրերի հիման վրա:

Նախագծով նախատեսվում է վերակառուցել և վերանորոգել Թումանյանի քաղաքապետարանի շենքի առաջին հարկում գոյություն ունեցող գրադարանի և խորհդանոցի սենյակները՝ հաջորդիվ նկարագրված և նախագծում գծագրված եղանակով, կազմակերպելով Քաղաքացիների Սպասարկման Գրասենյակ (այսուհետ՝ ՔՍԳ):

Նախագիծը առաջնորդվում է որոշակի սկզբունքային մոտեցումներով՝ ֆունկցիոնալ հարմարավետություն, շահագործման կոմֆորտ, առողջ և անվտանգ պայմաններ, հաճելի և անկաշկանդ ժամանակակից պարզ միջավայրի կազմակերպում, տնտեսապես մատչելի էներգաարդյունավետ լուծումներ, շահագործման ծախսերի նվազեցմանը նպաստող լուծումներ, սենյակների ամբողջական և լիարժեք նորոգում, հնարավորինս ճկուն նախագծային լուծումներ ապագա զարգացումների համար, նախագծային առաջարկները սահմանափակված են սույն նախագծին հատկացվող բյուջեով:

Նախագծով նախատեսված շինարարական և մոնտաժային աշխատանքները խմբավորված են առանձին չափաբաժիններում (այսուհետ՝ Լոտ).

Լոտ 1՝ Շինարարական աշխատանքներ<br>
Լոտ 2՝ Մետաղապլաստե դռներ և լուսամուտներ<br>
Լոտ 3՝ Ապակե դռներ և ապակե միջնորմներ<br>
Լոտ 4՝ Էլեկտրատեխնիկական աշխատանքներ<br>
Լոտ 5՝ Ջեռուցում<br>
Լոտ 6՝ Լուսամուտների ճաղերի պատրաստում<br>
Լոտ 7՝ Անվտանգության համակարգեր<br>
Լոտ 8՝ Լուսատուների պատրաստում և լամպեր<br>
Լոտ 9՝ Կահույքի պատրաստում

Բոլոր լոտերով հանձնարարվող աշխատանքները և նյութերի, սարքերի ու սարքավորումների գնումները պետք է համաձայնեցվեն նախագծի ճարտարապետի հետ:

## 2. ԲՈԼՈՐ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՆԿԱՐԱԳԻՐԸ

Գոյություն ունեցող գրադարանի սենյակը նախատեսվում է բաժանել երկու հավասար չափի սենյակների: Դրանից մեկում կպահպանվի գրադարանը, իսկ մյուսում կկազմակերպվի ՔՍԳ: Սենյակների բաժանումը ըստ նախագծի կկատարվի ամբողջությամբ ապակե միջնորմով, առաստաղի բարձրությամբ: Այդպիսով որոշակիորեն կպահպանվի երկու սենյակների միջև տեսողական հաճելի կապը և բնական լույսը, ինչպես նաև տարածքի մակերեսը կօգտագործվի առավելագույն չափով:

Գրադարանը և ՔՍԳ-ն կնորոգվեն նույն մոտեցմամբ:

Գոյություն ունեցող մանրահատակը կպահպանվի և կնորոգվի՝ լրացնելով հատակի վրա բաց տեղերը:

ՔՍԳ-ի մուտքի դռան բացվածքը կընդարձակվի, իսկ մեջը կտեղադրվեն երկու ապակե, անշրջանակ դռներ:

Նորոգվող սենյակների բոլոր հին փայտե լուսամուտները կփոխարինվեն նոր, համեմատաբար էներգաարդյունավետ պլաստիկ լուսամուտներով, երկշերտ ապակե փաթեթներով: Ինչպես նաև կտեղադրվեն անվտանգության ճաղեր, հակամիջատային ցանցեր, իսկ լուսամուտների բացվող փեղկերը, կկառավարվեն սահմանափակիչով՝ համեմատաբար արդյունավետ և կոմֆորտ բնական օդափոխություն ապահովելու համար:

ՔՍԳ-ին թարմ օդ մատակարարելու համար, արտաքին պատի վրա նախատեսված է օդանցք առանց օդամղիչի:

ՔՍԳ-ին կից առկա խորդանոցը կվերակառուցվի կաթսայատան: Սույն նախագծի շրջանակներում այն կծառայի միայն ՔՍԳ-ի, գրադարանի և կաթսայատան տարածքների ջեռուցման համար: Ճկուն նախագծի շնորհիվ հետագայում այն կարող է հզորացվել տնտեսապես արդյունավետ եղանակով քաղաքապետարանի բոլոր սենյակները ջեռուցելու համար:

Սենյակների պատերին առկա հարդարարական շերտերը հիմնականում կպահպանվեն, վնասված սվաղի տեղերը կնորոգվեն և բոլոր պատերը, ինչպես նաև առաստաղները ամբողջությամբ կներկվեն:

Սենյակների ֆունկցիոնալ լուսավորության համար նախագծով մշակված են հատուկ ժամանակակից, էներգաարդյունավետ փայտե լուսատուներ, որոնք լիովին կապահով են նորմատիվ լուսավորության քանակները: Լուսատուներում կտեղադրվեն երկու զույգ 18 Վտ LED ծողային լամպեր:

Սենյակներում կոմֆորտ և անվտանգ էլեկտրասնուցում ապահովելու համար էլեկտրական մալուխների և սարքերի հիմնովին և ժամանակակից նախագիծ է մշակված:

ՔՍԳ-ն կկահավորվի լրիվ նոր կահույքով, այդ թվում նաև սերվերի անվտանգ և տնտեսապես մատչելի պահարանով:

Նախագծի յուրաքանչյուր Լոտի համար կազմված է աշխատանքների և նյութերի ծավալաթերթ, ինչպես նաև մանրամասն նկարագիր:

Առկա վիճակի լուսանկարները կցված են նախագծային փաթեթին:

## 3. ԼՈՏ 9. ՄԱՆՐԱՄԱՍՆ ՆԿԱՐԱԳԻՐ

Սույն Լոտով պահանջվում է պատրաստել սույն նախագծով գծագրված հատուկ կահույքը, մատակարարել պահանջվող աթոռները՝ նախագծի ծավալաթերթում և գծագրերում նշված քանակներով:

Հնարավոր է որոշ աթոռների գնումը փոխարինվի առկա աթոռների և բազմոցի նորոգմամբ նույն բյուջեի սահմաններում:

Կահույքի առաքումը հետագայում կարող է իրականացվել մեկ այլ կողմով՝ ըստ համաձայնության:

Բոլոր աշխատանքների ընթացքի մասին պետք է պարբերաբար տեղեկացվի նախագծի ճարտարապետին և նրա հետ միասին կոորդինացվի նախատեսված աշխատանքները:

Ավելի մանրամասն նայել գծագրերում և ծավալաթերթում:

Կազմեց՝ ճարտարապետ Զոհրաբ ԲԱՈՒԵՐ